https://doi.org/10.46991/S&L/2023.95.104

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Պետիկ Մկրտչյան
ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Մեղադրյալի բացակայությամբ (in absentia) վարույթը մեղադրյալի անմիջական մասնակցության հիմնական կանոնից յուրահատուկ բացառություն է, որը հնարավորություն է տալիս նախաձեռնված քննությունը շարունակելու և ավարտելու առանց հանցանքի մեջ մեղադրվող անձի անմիջական մասնակցության: Նման կարգավորման նպատակը արդարադատության, ինչպես նաև վարույթի մյուս մասնակիցների (մասնավորապես՝ տուժողների կամ այլ մեղադրյալների) շահերի համաչափ պաշտպանությունն է, որպեսզի վարույթի ընթացքը և հանգուցալուծումը կախված չլինեն բացառապես մեկ անձի սուբյեկտիվ նկրտումներից:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի չներկայանալու պատճառով դատական նիստն անցկացնելու անհնարինությանը, նշել է, որ դա կարող է կաթվածահար անել քրեական վարույթի ընթացքը, քանի որ կարող է, մասնավորապես, ապացույցների անհետացման, քրեական հետապնդման վաղեմության ժամկետը լրանալու կամ արդարադատության սխալի պատճառ դառնալ[2]: Այդուհանդերձ, դատական նիստը մեղադրյալի բացակայությամբ անցկացնելը չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, եթե նա հրաժարվել է դատաքննությանը ներկա գտնվելու իրավունքից կամ խուսափել է դատական քննությունից[3]:

Քննարկվող վարույթի իրականացման համար անհրաժեշտ է, որ առկա լինեն հեռակա վարույթի կիրառման հիմքն ու պայմանները, և բացակայեն այդ վարույթը բացառող հանգամանքները:

Հեռակա վարույթ նախաձեռնելու հիմքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի[4] (այսուհետ նաև՝ Օրենսգիրք կամ ՀՀ քր. դատ. օր) 476-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մեղադրյալի բացակայությամբ վարույթն իրականացվում է միայն այն դեպքում, երբ *մեղադրյալը խուսափում է քրեական վարույթին մասնակցելուց:*

Նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ այս վարույթի տարբերակման հիմքը մեղադրյալի հրաժարումն է մասնակցել իր վերաբերյալ իրականացվող քրեական վարույթին:

Քրեական վարույթին անմիջական մասնակցություն ունենալու իրավունքից հրաժարվելու հանգամանքը վարույթ իրականացնող մարմինը պետք է գնահատի սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվելու իրավաչափության պայմանների համատեքստում: Սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվելը իրավաչափ է, եթե հրաժարվելու մասին դիրքորոշումը ծագել է կոնկրետ իրավա-

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:
[2] Տե՛ս Colozza v. Italy, կետ 29:
[3] Տե՛ս Lena Atanasova v. Bulgaria, կետ 52:
[4] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-306-Ն: Ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ.:

հարաբերության շրջանակներում, այն գիտակցված է, կամային, իսկ իրավունքից հրաժարվող անձն իրազեկված է հրաժարման հետևաքների մասին[1]:

Եվրոպական դատարանի պահանջն է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքներից հրաժարվելն ամեն դեպքում պետք է համահունչ լինի նախադեպային պրակտիկայում ձևակերպված՝ «իմանալու և հասկանալու» չափորոշիչին[2]:

Անդրադառնալով մեղադրյալի կողմից վարույթին ներկայանալու և պաշտպանվելու իրավունքից հրաժարվելու դեպքում այս պահանջի գոյությանը՝ Եվրոպական դատարանը սահմանում է՝ որպեսզի այդ պարագայում նման հրաժարումը հաշվի առնվի Կոնվենցիայի իմաստով, պետք է լինի ոչ երկիմաստ և ապահովված դրա ծանրությանը համապատասխանող նվազագույն երաշխիքներով[3]:

Հեռակա վարույթ նախաձեռնելուց առաջ իրավասու մարմինը նախ և առաջ պետք է հավաստիանա, որ մեղադրյալը հրաժարվել է իր վերաբերյալ վարույթին մասնակցելու իրավունքից, այսինքն՝ վարույթին չմասնակցելը պայմանավորված է եղել մեղադրյալի կամքով և ոչ թե վերջինիս կամքից անկախ պատճառներով:

Մեղադրյալի կամքից անկախ պատճառներով իր վերաբերյալ վարույթին մասնակցելու անհնարինության դեպքում բացառվում է հեռակա վարույթ կիրառելու իրավաչափ հնարավորությունը, քանի որ տվյալ պարագայում բացակայում է նշված վարույթի հիմքում ընկած իրավունքից հրաժարման պայմանը, այն է՝ իրավունքից հրաժարվողի կամարտահայտությունը (կամքի ազատությունը):

Նման իրավիճակ կարող է առաջանալ, երբ մեղադրյալը վարույթին չի մասնակցում, օրինակ՝ այլ պետության տարածքում ձերբակալվելու պատճառով: Նկարագրվածը չի կարող գնահատվել որպես իրավունքից հրաժարում, և եթե վարույթ իրականացնող մարմինը տեղյակ է վարույթին չմասնակցելու պատճառի մասին, ապա չի կարող որոշում կայացնել հեռակա վարույթ կիրառելու մասին: Օրինակ՝ F.C.B. ընդդեմ Իտալիայի գործով Իտալիայի դատարանը դատաքննությունն իրականացրել է դիմողի բացակայությամբ, թեև նրա փաստաբանը դատարանին հայտնել էր, որ իր վստահորդը այլ պետությունում ձերբակալվել է: Եվրոպական դատարանը նշված գործով հաստատել է Եվրոպական կոնվենցիայի խախտում և նշել է, որ դիմումատուն դատական լսումներին մասնակցելու իրավունքից հրաժարվելու ցանկություն չի հայտնել, իսկ դատարանը նրա՝ դատական նիստին ներկայացնելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկել:

Ինչպես արդեն նշվեց, տարբերակված այս վարույթի կիրառման համար անհրաժեշտ է, որ մեղադրյալը խուսափի իր վերաբերյալ վարույթին մասնակցելուց: Ասվածով պայմանավորված՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ո՞ր դեպքում կարող է մեղադրյալը համարվել վարույթին մասնակցելուց խուսափող:

Ակադեմիական շրջանակներում չի ձևավորվել միասնական մոտեցում այն բանի շուրջ, թե դատավարական իմաստով ինչ պետք է հասկանալ «խուսափող անձ» ասելով: Օրինակ՝ պրոֆեսոր Վ. Ն. Կուրչենկոն, քննությունից կամ դատից խուսափել ասելով, հասկանում էր անձի ցանկացած դիտավորյալ արարք, որն ուղղված էր վերջինիս կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելուն, և որի առնչությամբ իրականացվում էին հետախուզման հատուկ միջոցառումներ[4]: Հեղինակը հավելում էր նաև, որ քննությունից խուսափելու ներքո հասկացվում են նաև

---

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա.** Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը, Եր.: Տիգրան Մեծ հրատ 2018, էջեր 126-131:

[2] Տե՛ս Sejdovic v. Italy (GC), 86-87 կետեր:

[3] Տե՛ս Poitrimol v. France, 277 Eur. Ct. H.R. (ser. A), 31 (1993):

[4] Տե՛ս **Курченко В.Н.** Давность в уголовном праве // Российский юридический журнал. 2012. № 6 // СПС «КонсультантПлюс».

ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի պայմանի՝ բնակության վայրը չփոխելու և կանչով ներկայանալու պարտականություն խախտելը, մշտական բնակության վայրից հանկարծակի մեկնելը, կեղծ փաստաթղթերով բնակվելը[1]:

Քննությունից և դատից խուսափելու բավականին լայն մեկնաբանություն է տալիս Տ. Յու. Պողոսյանը: Նրա կարծիքով՝ անձը համարվում է քննությունից կամ դատից խուսափող, եթե իրականացնում է այնպիսի արարքներ, որոնք ուղղված են քրեական պատասխանատվությունից խուսափելուն (բնակության հասցեի կամ ազգանվան փոփոխություն, տարաբնույթ պայմանների ստեղծում, որոնք նախաքննական մարմնին պարտավորեցնում են հայտարարել հանցավորի հետախուզում)[2]:

Հետաքրքրական մոտեցում է առաջ քաշում Ա. Տառբագանը. նա վարույթից խուսափել եզրույթը բաժանում է փաստացիի և իրավաբանականի: Փաստացի խուսափելու տակ հեղինակն առաջարկում է հասկանալ ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավաչափ արարքները, որոնք կատարվում են մինչև վերջինիս մեղսագրվող արարքի կապակցությամբ վարույթ նախաձեռնելը և ուղղված են քրեական պատասխանատվությունից խուսափելուն (օրինակ՝ հանցավորը փոխում է բնակության վայրը, երբ իրավապահ մարմիններին անհայտ էր հանցանքի փաստը): Իրավաբանական իմաստով քննությունից կամ դատից խուսափելը, նրա կարծիքով, այն հակահրավական դիտավորյալ արարքներից է, որոնք արտահայտվում են նախկինում արդեն ծագած իրավաբանական պարտականությունների չկատարմամբ՝ կանգնելու քննության և դատի առաջ (կասկածյալը կամ մեղադրյալը հրաժարվել է ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի ծանուցագրով կամ խախտել է իր նկատմամբ ընտրված խափանման միջոցի պայմանները)[3]: Բացի այդ՝ Ա. Տառբագանը նշում է, որ այնպիսի գործողությունները, ինչպիսիք են հեռակա կարգով մեղադրյալ ներգրավելը, խափանման միջոցի կիրառումը և հեռակա հետախուզման հայտարարումը, չեն կարող հիմք հանդիսանալ անձին քննությունից կամ դատից խուսափող համարելու համար[4]:

Այսպիսով կարելի է ենթադրել, որ քրեական պատասխանատվությունից խուսափելուն ուղղված անձի դիտավորությունը, որը դրսևորվում է վերջինիս գործողություններում, կարող է հիմք հանդիսանալ անձին քննությունից կամ դատից խուսափող ճանաչելու համար:

ՌԴ գերագույն դատարանի պլենումը դատարանների կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը և կարգը կանոնակարգող օրենսդրության կիրառման մասին 2013 թվականի հունիսի 27-ի թիվ 19 որոշմամբ արձանագրել է, որ քննությունից կամ դատից խուսափող կարելի է համարել այն կասկածյալին կամ մեղադրյալին, որի արարքներն ուղղված են ձերբակալվելուց կամ (և) քրեական պատասխանատվությունից խուսափելուն (օրինակ՝ բնակության վայրի նպատակադրված փոփոխությունը, կասկածյալի կամ մեղադրյալի՝ իր նկատմամբ ընտրված խափանման միջոցի պայմանի խախտումը, այդ թվում՝ արգելանքի վերցվելուց հետո փախուստը):

Հեռակա վարույթի կիրառման տեսանկյունից պետք է տարբերակել հետևյալ իրավիճակները.

առաջին՝ անձը դիմում է փախուստի (թաքնվում է ենթադրվող վարույթից) հանցավոր արարքը կատարելուց հետո, սակայն մինչև այդ փաստի առթիվ վարույթ նախաձեռնվելը և այդ մասին իրեն ծանուցվելը (փաստացի խուսափում).

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Уголовное право. Общая часть / под ред. И.Я. Козаченко. М.: Норма, 2008. էջ 605:

[3] Տե՛ս **Тарбагаев А.** Что считать уклонением от следствия и суда, приостанавливающим течение срока давности, предусмотренного ст.78 УК РФ? // Уголовное право. 2008. № 4 // СПС «КонсультантПлюс»:

[4] Տե՛ս նույն տեղում:

երկրորդ՝ անձը վարույթին մասնակցելուց խուսափող արարքներ իրականացնում է իրեն մեղսագրվող արարքի առթիվ քրեական վարույթ նախաձեռնվելուց հետո (իրավաբանորեն խուսափում):

Այն դեպքում, երբ անձը, ենթադրելով, որ իր կատարած հանցավոր արարքի առնչությամբ վաղ թե ուշ իրականացվելու է վարույթ, դիմում է փախուստի, փոխում է բնակության վայրը կամ իրականացնում է այլ գործողություններ, որոնք առերևույթ կարող են վկայել վերջինիս կողմից քննությունից խուսափելու մասին, ապա ասվածը չի կարող իրավաբանական իմաստով հիմք հանդիսանալ պնդելու, որ առկա է հեռակա վարույթ նախաձեռնելու հիմքը: Այլ կերպ ասած՝ եթե անձի կողմից քննությունից խուսափելու մասին վկայող արարքները կատարվում են նախքան վարույթ նախաձեռնելը կամ նախաձեռնված վարույթի մասին անձին տեղեկացնելը, ապա քննարկվող ինստիտուտի իմաստով անձը չի կարող համարվել քննությունից խուսափող, և նրա նկատմամբ չի կարող որոշում կայացվել հեռակա վարույթ անցկացնելու մասին:

Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ իր կատարած ենթադրյալ հանցանքի փաստի առթիվ իրականացվող վարույթի վերաբերյալ անձի չիմացությունը և այդ վարույթին համապատասխան կարգավիճակի բացակայությունը չեն կարող վկայել իրավաբանական առումով քրեական պատասխանատվությունից խուսափելու հանգամանքի մասին և հիմք հանդիսանալ տարբերակված այս վարույթի կիրառման համար:

Բացի այդ, քանի դեռ չկա քրեական վարույթ, և այդ վարույթում անձը չունի մասնակցություն ենթադրող դատավարական կարգավիճակ, ապա վերջինիս՝ վարույթին մասնակցելու իրավունքից հրաժարումը առարկայազուրկ է, այս առումով իրավական նշանակություն չունեցող: Ասվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ եթե չկա նախաձեռնված վարույթ, որը կառաջացնի վարույթին անմիջական մասնակցություն ունենալու իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստեր, ապա անձը չի կարող հրաժարվել այդ պահին գոյություն չունեցող իրավունքից:

Իսկ այն դեպքում, երբ անձը վարույթին մասնակցելուց խուսափել համարվող արարքները իրականացնում է իր կողմից կատարված ենթադրյալ հանցանքի փաստով պաշտոնական ընթացակարգեր սկսվելուց հետո, ապա վերջինիս վարքագիծը որոշակի պայմանների առկայության դեպքում կարող է գնահատվել վարույթին մասնակցելու իրավունքից հրաժարումը և հիմք հանդիսանալ տարբերակված այս վարույթը կիրառելու համար:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հեռակա վարույթի իրավաչափ նախաձեռնման համար անհրաժեշտ է, որ անձը տեղեկացված լինի իրեն մեղսագրվող փաստի առթիվ իրականացվող վարույթի մասին և դիտավորյալ խուսափի (հրաժարվի) դրան մասնակցելուց: Ընդ որում, վարույթի մասին անձի տեղեկանալը կարող է լինել ինչպես քրեական վարույթ նախաձեռնելու փուլում, այնպես էլ վարույթի հետագա ընթացքում: Կարծում ենք, որ քրեական վարույթին մասնակցելուց խուսափող կհամարվի նաև այն անձը, որը խուսափել ենթադրող գործողությունները թեև կատարել է մինչև վարույթ նախաձեռնելը կամ նախաձեռնված վարույթի մասին տեղեկանալը, սակայն հետագայում իմանալով (իրազեկվելով) իրեն մեղսագրվող արարքի փաստով իրականացվող վարույթի մասին՝ չի ձեռնարկել համապատասխան միջոցներ իր ներկայությունն այդ վարույթին ապահովելու համար: Այլ կերպ ասած՝ երբ անձի՝ քննությանը մասնակցելուց խուսափելը թեև լինում է մինչև վերջինիս մեղսագրվող փաստի առնչությամբ վարույթ նախաձեռնելը կամ այդ մասին նրան ծանուցելը, սակայն ընթացքում ձեռք են բերվում այդ վարույթի մասին վերջինիս հետագա ծանուցված լինելու և դրան մասնակցելուց հրաժարվելու փաստը հաստատող ապացույցներ, ապա նկարագրված իրավիճակները ևս կարող են գնահատվել որպես վարույթին մասնակցելուց խուսափում և հիմք հանդիսանալ հեռակա վա-

րույթ կիրառելու:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ քննարկվող ինստիտուտի իմաստով քննությունից խուսափող (իրավաբանական տեսանկյունից) կարող է համարվել այն անձը, որը, տեղյակ լինելով իրեն վերագրվող արարքի առնչությամբ իրականացվող քրեական վարույթի մասին, կատարում է այնպիսի դիտավորյալ արարքներ, որոնք անհնար են դարձնում այդ վարույթին նրա ֆիզիկական ներկայության ապահովումը: Հետևաբար ենթադրյալ հանցանքի փաստով վարույթ նախաձեռնելուց առաջ անձի այնպիսի գործողությունները, որոնք առերևույթ կարող են վկայել վերջինիս կողմից քննությունից խուսափելու մասին, չեն կարող իրավաբանական իմաստով հիմք հանդիսանալ հեռակա վարույթ նախաձեռնելու համար:

Հեռակա վարույթ նախաձեռնելու պայմանները: Տարբերակված այս վարույթն իրավաչափ նախաձեռնելու և իրականացնելու համար անհրաժեշտ է, որ առկա լինեն որոշակի պայմաններ, մասնավորապես՝ անհրաժեշտ է, որ.

առաջին՝ մեղադրյալը պատշաճ ծանուցված լինի իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին.

երկրորդ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվեն անհրաժեշտ և բավարար միջոցներ վարույթին մեղադրյալի մասնակցությունն ապահովելու համար:

Այսպիսով, հեռակա վարույթի իրականացման համար պահանջվում է՝ մեղադրյալը պատշաճ տեղեկացված լինի, որ գոյություն ունի քրեական վարույթ, և այդ վարույթով իր նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:

Դ. Տ. Արաբուլին նկատում է, որ մեղադրյալի բացակայությամբ վարույթի կիրառումը հնարավոր է միայն անձին որպես մեղադրյալ ներգրավելուց հետո, քանի որ քրեադատավարական օրենքի համաձայն՝ անձին մեղադրանք ներկայացնելը ենթադրում է նրա անմիջական մասնակցություն այդ վարութային գործողությանը[1]:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է նաև հակադիր կարծիք. մեղադրյալին մեղադրանքի անմիջական չներկայացնելը խոչընդոտ չէ գործը նրա բացակայությամբ ըստ էության քննելու համար: Հետևաբար հեռակա վարույթ կարող է անցկացվել նաև այն դեպքում, երբ մեղադրանքն անմիջականորեն չի ներկայացվել մեղադրյալին[2]:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջ է գալիս հետևյալ հարցը, թե իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը աներկբայորեն ենթադրու՞մ է քննիչի կողմից մեղադրանքի անմիջական ներկայացում, թե՞ մեղադրյալը իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին կարող է ծանուցվել նաև այլ ճանապարհով:

ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված կարգով քննիչի կողմից մեղադրյալին մեղադրանք ներկայացնելը նշված նորմի իմաստով համարվում է հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցում: Սակայն այն դեպքերում, երբ մեղադրյալը թեև տեղյակ է լինում իրեն մեղսագրվող փաստի առթիվ հարուցված քրեական վարույթի մասին, սակայն փախուստի է դիմում մինչև օրենքով սահմանված կարգով իրեն մեղադրանքի ներկայացումը, ապա նկարագրված իրավիճակը չի բացառում հեռակա վարույթի կիրառումը, եթե մեղադրյալին քրեական հետապնդման մասին հնարավոր է լինում ծանուցել այլ ճանապարհով:

Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 479-րդ հոդ-

---

[1] Տե՛ս **Арабули Д.Т.** Заочное производство по уголовным делам: история и современность. Челябинск, 2007, էջ 72–73:

[2] Տե՛ս **Казаков А.А.** Заочное судебное разбирательство: дис. … канд. юрид. наук. Екатеринбург, 2009, էջ 202:

վածն ուղղակիորեն նախատեսում է այն իրավիճակը, երբ մինչև հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելը մեղադրյալին մեղադրանք ներկայացված չի եղել: Տվյալ դեպքում հեռակա վարույթով մեղադրանքը ներկայացվում է քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը քննությունից խուսափող մեղադրյալի պաշտպանին հանձնելով, ինչպես նաև մեղադրանքի փաստական հիմքը և իրավական գնահատականը նրան պարզաբանելով (2-րդ և 3-րդ մասեր):

Նշված դրույթի բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ հեռակա վարույթի մեկնարկը տալու համար չի պահանջվում, որ մեղադրանքն անմիջականորեն ներկայացված լինի մեղադրյալին, որպեսզի վերջինս համարվի իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված: Ասվածից բխում է, որ հնարավոր է հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշումը կայացվի նաև այն դեպքում, երբ դեռ մեղադրանք չի առաջադրվել մեղադրյալին: Սակայն հարկ է նկատել, որ այս որոշման կայացումը հնարավոր է միայն իրավասու դատախազի կողմից մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց հետո:

Քննարկվող ինստիտուտի իմաստով ՄԻԵԴ-ի դիտարկմամբ՝ անձի ծանուցումը (տեղեկացվածությունը) իր նկատմամբ հարուցված վարույթի վերաբերյալ պետք է իրականացվի ձևին և էությանը վերաբերող նյութական ու դատավարական պահանջներին համապատասխան, որոնք կերաշխավորեն մեղադրյալի իրավունքների արդյունավետ կենսագործումը. ոչ հստակ (մշուշոտ) և ոչ պաշտոնական տեղեկատվությունը բավարար չէ[1]:

Մեղադրյալի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը հաստատելու համար անհրաժեշտ են քրեական վարույթն իրականացնող մարմնի վրա Օրենսգրքով դրված որոշակի ստուգելի պարտականությունների պատշաճ կատարում:

Ասվածի բովանդակությունից հետևում է, որ քննիչը պետք է կատարած լինի պոզիտիվ նպատակային գործողություններ (օրինակ՝ մեղադրյալին մեղադրանք ներկայացնի, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հասանելի միջոցներով (բջջային հավելվածներ, էլեկտրոնային փոստ և այլն) մեղադրյալին տեղեկացնի հարուցված քրեական հետապնդման մասին կամ կոնկրետ ապացույցով հավաստիանա, որ մեղադրանքի վերաբերյալ պատշաճ ծանուցված ընտանիքի անդամը կամ վարույթին ներգրավված պաշտպանը այդ մասին հայտնել է մեղադրյալին[2])[3]:

Ավելին, քննարկվող վարույթի հիմքում, ինչպես արդեն նշվել է, ընկած է մեղադրյալի կողմից իր իրավունքներից հրաժարման գաղափարը: Այդ իսկ պատճառով նշված վարույթը գործարկելու համար պահանջվում է առնվազն հիմնավորել, որ մեղադրյալը տեղյակ է իր նկատմամբ իրականացվող վարույթի և այդ վարույթի շրջանակներում իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին: Այդ փաստերի վերաբերյալ տեղեկացվածությունը կարող է բխել նաև ինչպես մեղադրյալի կողմից ստացված պաշտոնական ծանուցումներից, այնպես էլ վերջինիս գործողություններից (օրինակ՝ մեղադրյալը լիազորում է պաշտպանի (պաշտպանների) քրեական վարույթի ընթացքում իր պաշտպանությունը ստանձնելու նպատակով[4] կամ դիմումներ, միջնորդություններ է հասցեագրում վարույթ իրականացնող մարմնին կամ միջազգային կառույցներին՝ իր նկատմամբ սահմանափակումները վերաց-

[1] Տե՛ս Sejdovic v. Italy (GC), // Бюл. ЕСПЧ. 2006. № 10. էջ. 36–38:
[2] Տե՛ս, օրինակ, Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:
[3] Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 625-617:
[4] https://www.asser.nl/media/795064/grc-trials-in-absentia-english.pdf:

նելու, հայտարարված հետախուզումը դադարեցնելու կամ իր նկատմամբ հարուցված վարույթին առնչվող որոշակի գործողություններ կատարելու համար, որից պարզ է դառնում մեղադրյալի տեղեկացվածությունն իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին): Հարուցված քրեական հետապնդման վերաբերյալ ծանուցված լինելու մասին կարող են վկայել նաև մեղադրյալի կողմից լիազորված պաշտպանի հայտարարությունները մեղադրանքի կապակցությամբ իր վստահորդի դիրքորոշման վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով՝ ենթադրություններն այն բանի օգտին, որ ԶԼՄ-ներով տարածված հաղորդագրություններից մեղադրյալն իմացած կլինի իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, կամ վերջինիս պաշտպանը չէր կարող այդ մասին նրան հայտնած չլինել, ինչպես նաև ենթադրությունները, որ մեղադրյալը նպատակադրվել է խուսափել իր նկատմամբ իրականացվող վարույթից՝ այդ մասին տեղեկանալով, օրինակ, ազգականների նամակներից[1] կամ զանգվածային լրատվության միջոցներից[2], համարվում է անհիմն, ոչ բավարար: Եվրոպական դատարանը պահանջում է, որ մեղադրյալի՝ իր նկատմամբ իրականացվող վարույթի վերաբերյալ տեղեկացվածության փաստի հաստատումն իրականացվի ապացուցման առավել բարձր ստանդարտի հաշվառմամբ, և այդ ուղղությամբ վարույթ իրականացնող մարմնի պատշաճ ջանասիրության դրսևորումն ինքնին չի համարվում բավարար[3]: Մեղադրյալի վրա չպետք է դրվի նաև քրեական վարույթին մասնակցելուց չխուսափելու կամ քրեական հետապնդման մասին չիմանալու ապացուցման բեռը:

Ինչպես արդեն նշվեց, հարուցված քրեական հետապնդման մասին ծանուցված լինելու պայմանը չի ենթադրում միայն վարույթ իրականացնող մարմնի կողմից պաշտոնական ծանուցում: Միևնույն ժամանակ, պաշտոնական ծանուցման բացակայության պայմաններում փաստերի համակցությունը կարող է հաստատել, որ մեղադրյալը տեղյակ է իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին և հրաժարվում է պաշտոնական ընթացակարգերին ուղիղ մասնակցություն ունենալուց: Ասվածը հնարավոր է նաև այն իրավիճակներում, երբ մեղադրյալը հրապարակայնորեն կամ գրավոր հայտնում է, որ մտադիր չէ մասնակցել իր նկատմամբ իրականացվող վարույթին կամ արձագանքելու ծանուցումներին, ինչպես նաև՝ երբ մեղադրյալին հաջողվել է խուսափել ձերբակալումից[4]:

Հարց է առաջանում, եթե մեղադրյալը ծանուցված է լինում կոնկրետ մեղադրանքի մասին, սակայն վարույթի հետագա ընթացքում այդ մեղադրանքը փոխվում է, ապա դադարու՞մ է արդյոք գոյություն ունենալ հեռակա վարույթի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը:

Գտնում ենք, որ Օրենսգրքում նախատեսված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը չի ենթադրում, որ մեղադրյալը ամենայն մանրամասնությամբ պետք է տեղեկացված լինի իր վերաբերյալ մեղադրանքի ինչպես փաստական կողմի, այնպես էլ իրավաբանական որակման վերաբերյալ: Բավարար է միայն այն փաստի գիտակցումը, որ ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթով իրեն մեղսագրվող հանցանքի փաստով իր նկատմամբ առկա է հարուցված քրեական հետապնդում առհասարակ: Ասվածից ուղղակիորեն հետևում է, որ մեղադրյալը հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված կհամարվի նույնիսկ այն դեպքում, եթե մինչև իր կողմից վարույթին մասնակցելուց հրա-

---

[1] Տե՛ս ՄԻԵԴ որոշում «T v. Italy» գործով, 12 հոկտեմբերի 1992 թ.:

[2] Տե՛ս ՄԻԵԴ որոշումը «Shomody v. Italy» գործով 18 մայիսի 2004 թ.:

[3] Տե՛ս IBA International Criminal Court and International Criminal Law Programme. Report on the ‘Experts’ Roundtable on trials in international criminal justice’ September 2016, էջ 6:

[4] Տե՛ս «Sejdovic v. Italy» գործով, 1 մարտի 2006 թ.:

ժարվելը նա տեղեկացված է եղել կոնկրետ մեղադրանքի մասին, մինչդեռ վարույթին անմիջական մասնակցելուց մեղադրյալի հրաժարվելուց հետո այդ մեղադրանքը փոփոխվել է (ավելացել են նոր դրվագներ, կրճատվել է մեղադրանքի ծավալը և այլն):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նկարագրված իրավիճակում մեղադրանքի փոփոխություն պետք է լինի հենց այն փաստական հանգամանքների շրջանակներում, որոնք մեղադրյալին ծանուցված մեղադրանքի հետ կազմում են մեկ ամբողջություն և չեն առնչվում այն մեղադրանքին, որի մասին իրազեկ չէ մեղադրյալը:

Այսինքն՝ միայն այն փաստի վերաբերյալ տեղեկացվածությունը, որ իր կատարած արարքի փաստով իր նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, բավարար է փաստելու, որ առկա է հեռակա վարույթի իրականացման տվյալ պայմանը:

Սակայն հարկ է ընդգծել, որ քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը չի ենթադրում, որ եթե մեղադրյալը տեղյակ է իր կատարած փաստի առթիվ իրականացվող կոնկրետ վարույթի մասին ու հրաժարվում է դրան մասնակցելուց, ապա մեխանիկորեն կամ լռելյայն հրաժարվում է մասնակցել իր վերաբերյալ առկա ցանկացած այլ վարույթի: Այսինքն, մեղադրյալի՝ կոնկրետ վարույթի մասին տեղյակ լինելը չի ենթադրում այլ վարույթների մասին տեղեկացվածություն: Հետևաբար, կոնկրետ հանցանքի փաստով մեղադրյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ վերջինս տեղեկացված լինի հենց այդ փաստով իրականացվող վարույթի մասին: Ասվածի համատեքստում, կարծում ենք, անընդունելի է քրեական վարույթների միացումն այն նպատակով, որպեսզի հնարավոր լինի մեղադրյալի պատշաճ ծանուցված վարույթի շրջանակներում հեռակա վարույթի իրականացնել նաև այն հանցանքի փաստով, որի վերաբերյալ բացակայում է մեղադրյալի պատշաճ ծանուցված լինելու պայմանը:

Օրենսգրքում օգտագործվող իր նկատմամաբ հարուցված քրեական հետապնդման մասին ծանուցված լինելու պայմանը առաջին հերթին ենթադրում է, որ մեղադրյալը պետք է տեղեկացված լինի, որ իրեն մեղսագրվող արարքի փաստով իրականացվող վարույթով առկա է իրավասու դատախազի՝ իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում (առկա է քրեական հետապնդում ձևական իմաստով):

Վարույթի ընթացքում հարուցված քրեական հետապնդման (մեղադրանքի) առկայությունը արդեն իսկ վկայում է, որ վարույթն իրականացվում է կոնկրետ անձի (անձանց) նկատմամբ: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, հետևաբար դրա գոյությունն արդեն իսկ անձին հիմք է տալիս գիտակցելու, որ վարույթն իրականացվում է իրեն մեղսագրվող հանցանքի փաստով, և տվյալ վարույթին իր ունեցած դատավարական կարգավիճակը ենթադրում է անմիջական մասնակցություն:

Սակայն հարց է առաջանում. այն դեպքում, երբ անձին հաջողվում է փախուստի դիմել ձերբակալվելուց հետո՝ մինչև նրա նկատմամբ ձևական առումով հետապնդում հարուցելը, կամ քննիչի կողմից իրականացվում են այնպիսի գործողություններ, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն (օրինակ՝ անձի բնակարանում խուզարկություն) (առկա է քրեական հետապնդում բովանդակային առումով), ապա կարո՞ղ է խոսք լինել հեռակա վարույթի տվյալ պայմանի առկայության մասին:

Բանն այն է, որ քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը նեղ իմաստով մեկնաբանվելու դեպքում անհնար կլինի հեռակա վարույթի իրականացումը այն անձանց նկատմամբ, որոնք թեև տեղյակ են եղել իրենց մեղսագրվող փաստի առթիվ իրականացվող արդեն իսկ հարուցված վարույթի մա-

սին, սակայն փախուստի են դիմել կամ թաքնվել են մինչև իրենց նկատմամբ ձևական առումով քրեական հետապնդում հարուցելը, և հարուցված քրեական հետապնդման մասին հնարավոր չի եղել ծանուցել վերջիններիս:

Սակայն կարծում ենք, որ հեռակա վարույթի կիրառման առանցքային որոշիչը ոչ թե ձևական առումով քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքն է, այլ այն, թե արդյոք անձը գիտի, որ իրեն մեղսագրվող արարքի կապակցությամբ իրականացվում է վարույթ, և այդ վարույթի ընթացքում ինքն ունի կամ անպայմանորեն ենթադրվում է, որ ունենալու է վարույթին մասնակցություն ենթադրող դատավարական կարգավիճակ: Իրեն մեղսագրվող արարքի վերաբերյալ վարույթի մասին անձը կարող է տեղեկացվել ոչ միայն իրավասու դատախազի կողմից քրեական հետապնդում հարուցելու որոշում կայացնելուց հետո, այլև ավելի վաղ, մասնավորապես՝ քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ տեղ գտած ձևակերպումներից[1] կամ հետապնդման մարմնի այնպիսի դատավարական գործողություններ իրականացնելուց, որոնք բովանդակային առումով ենթադրում են մեղադրանքի առկայություն (ձերբակալում, իր նկատմամբ ապացուցողական գործողությունների կատարում և այլն):

Եվրոպական դատարանը ևս քրեական վարույթին անմիջական մասնակցության իրավունքից հրաժարվելու հանգամանքը ճանաչելու համար պարտադիր չի համարում ձևական իմաստով անձի իրազեկվածությունը իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին:

Այսպիսով կարծում ենք, որ Օրենսգրքում գործածվող քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցված լինելու պայմանը պետք է մեկնաբանվի երևույթի ոչ թե նեղ՝ ձևական-իրավաբանական իմաստով, այլ այն իմաստով, որի տակ հասկացվի քրեական հետապնդումը բովանդակային առումով ևս: Այլ կերպ ասած՝ տվյալ պայմանի գոյությունը փաստելու համար անպայման չէ, որ անձը պատշաճ ծանուցված լինի իրավասու դատախազի կողմից իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման որոշման առկայության մասին, այլ *իրեն մեղսագրվող արարքի վերաբերյալ իրականացվող քրեական վարույթի* մասին տեղեկացված (իրազեկված) լինելու փաստն ինքնին բավարար է հավաստելու, որ առկա է տվյալ պայմանը: Իրեն մեղսագրվող արարքի վերաբերյալ վարույթի մասին անձը կարող է տեղեկանալ ինչպես ձերբակալվելիս, վարույթ նախաձեռնելու որոշմանը ծանոթանալիս, այնպես էլ վարույթային այնպիսի գործողություններին մասնակցելիս, որոնք անպայմանորեն ենթադրում են իր նկատմամբ մեղադրանքի առկայություն:

Տվյալ վարույթի կիրառումը անհիմն չսահմանափակելու նկատառումներից ելնելով՝ առաջարկում ենք պայմանի այդօրինակ մեկնաբանություն, իսկ հարցը օրենսդրական մակարդակում լուծելու նպատակով առաջարկում ենք Օրենսգրքի 476-րդ հոդվածի 1-ին մասում «Հեռակա վարույթ կարող է իրականացվել, եթե մեղադրյալը պատշաճ ծանուցված է իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին» ձևակերպումը փոխարինել «Հեռակա վարույթ կարող է իրականացվել, եթե մեղադրյալը պատշաճ ծանուցված է իրեն մեղսագրվող արարքի կապակցությամբ իրականացվող վարույթի մասին» ձևակերպումով, կամ ընդհանրապես հանել նշված ձևակերպումը, քանի որ սույն հոդվածի առաջին նախադասությունը, այն է՝ *մեղադրյալի բացակայությամբ վարույթը իրականացվում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը խուսափում է քրեական վարույթին մասնակցելուց,* մեկնաբանելիս քրեական վարույթին մասնակցելուց խուսափել ձևակերպումն անպայմա-

[1] Լ. Պողոսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0136/11/11 գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը:

նորեն ենթադրում է տվյալ վարույթի մասին իմացություն:

Մեղադրյալի՝ քրեական վարույթին մասնակցելու իրավունքից հրաժարման ձևերը: Մեղադրյալի բացակայությամբ վարույթի իրականացման տեսանկյունից կարևոր է այն հարցը, թե ինչպե՞ս կարող է դրսևորվել քրեական վարույթին մասնակցելուց մեղադրյալի հրաժարումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հեռակա վարույթի կարգը սահմանող գլխում հստակ չի մատնանշվում այն ձևը, որի դեպքում մեղադրյալը կհամարվի վարույթից խուսափող: Սակայն Օրենսգրքի համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս առանձնացնել մեղադյալի՝ վարույթին մասնակցելուց հրաժարվելու ձևը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը դատական վարույթին մեղադրյալի պարտադիր մասնակցության կանոնից սահմանել է բացառություն:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 272-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով դատական նիստը դատարանի որոշմամբ անցկացվում է մեղադրյալի բացակայությամբ, եթե վերջինս նախնական դատալսումների ընթացքում նման միջնորդություն է ներկայացրել:

Նշված հոդվածից բխում է, որ դատական վարույթին մասնակցելուց մեղադրյալի հրաժարվելը հնարավոր է միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով: Ընդ որում, այդ միջնորդությունը պետք է ներկայացվի նախնական դատալսումների ընթացքում, և մեղադրյալը նման միջնորդություն ներկայացնելիս պետք է ֆիզիկապես ներկա լինի դատարանում, առնվազն մեկ անգամ կանգնի դատարանի առջև:

Ասվածը ենթադրում է, որ քննարկվող դեպքում մեղադրյալը կարող է հրաժարվել դատական վարույթին մասնակցելուց դատավարության կոնկրետ փուլում արված միջնորդությամբ: Մինչդեռ հեռակա վարույթ նախաձեռնելու համար մեղադրյալի վարույթին մասնակցելուց հրաժարվելը պարզապես միջնորդություն ներկայացնելով կամ այդ մասին հրապարակավ հայտարարելով չի կարող համարվել բավարար:

Այս վարույթի նախաձեռնման տեսանկյունից կարևոր է, որ մեղադրյալը դրսևորած վարքագծով ոչ միայն հրաժարվի մասնակցել վարույթին, այլ ստեղծի այնպիսի խոչընդոտներ, որը կբացառի նրա ներկայության ապահովումը: Ասվածը ենթադրում է, որ, լինելով իրավապահ մարմինների տեսադաշտում, վարույթին մասնակցելուց հրաժարվելու միջնորդությունը չի կարող բավարար համարվել, այլ անհրաժեշտ է, որ մեղադրյալը իրավապահ մարմիններից թաքնվելու կամ խուսափելու միջոցով բացառի վարույթին իր ֆիզիկական հասանելիության ապահովումը: Ասվածից հետևում է, որ մեղադրյալի պասիվ վարքագիծը (անգործությունը) իր վերաբերյալ վարույթին մասնակցելու կապակցությամբ, օրինակ՝ ծանուցագրերին չարձագանքելը, վարույթ իրականացնող մարմնի կանչով չներկայանալը, թեև համատեսական հարթությունում կարող է պարունակել իրավունքից հրաժարման տարրեր, սակայն եթե հայտնի է մեղադրյալի գտնվելու վայրը, և հնարավոր է ապահովել նրա մասնակցությունը վարույթային գործողությունների կատարմանը, այդ թվում՝ քրեադատավարական հարկադրանքի կիրառմամբ, ապա այդ վարքագիծն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ տարբերակված այս ընթացակարգի կիրառման: Ասվածը բխում է ՀՀ քր. դատ. օր-ի 476-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, համաձայն որի՝ եթե հնարավոր է ապահովել վարույթին մեղադրյալի անմիջական մասնակցությունը, ապա ընդհանուր վարույթից անցումը հեռակայի չի կարող գնահատվել իրավաչափ:

Միաժամանակ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցելու պահանջի կատարումը դեռ բավարար չէ այս հատուկ վա-

րությունը սկսելու համար, քանի որ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին մեղադրյալի իրազեկվածությունն ինքնին վարույթն իրականացնող մարմնին չի ազատում նրան որոնելու և հայտնաբերելու պարտականությունից: Այստեղից հետևում է, որ մեղադրյալի ֆիզիկական հասանելիությունն ապահովելու համար պետք է ձեռնարկվեն վարույթային և այլ իրավաչափ գործուն միջոցներ (օրինակ՝ ստանալ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշում, կատարել մեղադրյալի գտնվելու վայրը պարզելուն ուղղված ապացուցողական գործողություններ, հետաքննության մարմնին տալ համապատասխան հանձնարարություններ և այլն), և դրանք պետք է ցանկալի արդյունք չտան[1]:

Հարկ է արձանագրել, որ Օրենսգրքում օգտագործված հասկացությունները գնահատողական են, և յուրաքանչյուր գործով պետք է գնահատվի ձեռնարկված միջոցների անհրաժեշտ և բավարար լինելը: Օրինակ՝ բոլոր այն դեպքերում, երբ մեղադրյալը կգտնվի ՀՀ սահմաններից դուրս, և անհայտ կլինի նրա բնակության հասցեն, ապա կիրառելի նորմի իմաստով անհրաժեշտ և բավարար միջոց կհամարվի միջազգային հետախուզում հայտարարելը, իսկ դրա բացակայությունը՝ խոչընդոտ տվյալ վարույթը կիրառելու համար[2]:

ՌԴ գերագույն դատարանի պլենումը դատարանների կողմից գործը դատական քննության նախապատրաստելու կարգը սահմանող քրեական դատավարության օրենսդրության նորմերի կիրառման մասին 2009 թվականի դեկտեմբերի 22-ի No 28 որոշմամբ արձանագրել է, որ ամբաստանյալի բացակայությամբ դատաքննություն կիրառելու համար, ի թիվս այլ պայմանների, պետք է մեղադրյալի հետախուզումը դրական արդյունք տված չլինի, և անհնար լինի մեղադրյալի հանձնման իրականացումը:

Դատավարագիտության մեջ նշվում է, որ անհրաժեշտ է՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների վերաբերյալ գործերով անձի հետախուզումը իրականացված լինի վեց ամսից ոչ պակաս, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների գործերով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով, որպեսզի իրավաչափ գնահատվի հեռակա դատաքննություն կիրառումը: Այս առումով պետք է հաշվի առնել այն ռիսկը, որ հետախուզման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է կրել ձևական բնույթ՝ նպատակ ունենալով ստեղծելու գործով հեռակա վարույթ կիրառելու նախադրյալներ: Դրանով պայմանավորված՝ առաջարկվում է մեղադրանքի կողմի համար սահմանել պարտականություն՝ ապացուցել մեղադրյալի հետախուզման ուղղությամբ կիրառված միջոցների արդյունավետությունը[3]:

Հարկ է նկատել, որ վարույթին մեղադրյալի ֆիզիկական ներկայությունն ապահովելուն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ձեռնարկած միջոցների արդյունավետ ու բավարար լինելը չպետք է չափազանց ձևական մեկնաբանության ենթարկվի: Միջոցների բավարար ու արդյունավետ լինելը պետք է գնահատվի յուրա-

---

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ. էջ 617:

[2] Նեկայումս առկա է մեղադրյալին հետախուզում հայտարարելու վերաբերյալ օրենսդրական խնդիրներ: Դրանցից է, օրինակ, այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում չի նախատեսվել դատարանի կողմից մեղադրյալին հետախուզում հայտարարելու կառուցակարգ: Այս առնչությամբ օրենսդրական լուծումներ գտնելը արդի հրամայական է:

[3] Տե՛ս **И.П. Попова**, **И.Г. Смирнова**. Заочное судебное разбирательство по уголовным делам: проблемы реализации в контексте сравнительно-правового исследования. Вестник Томского государственного университета. 2018. № 431. էջ 197-198:

քանչյուր գործով՝ հաշվի առնելով այդ գործի փաստական հանգամանքները[1]: Ընդ որում՝ վարույթին մեղադրյալի ֆիզիկական ներկայությունն ապահովելու համար միջոցների ձեռնարկումը չպետք է սահմանափակվի վարույթի կոնկրետ փուլով կամ հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելով:

Մեղադրյալին հայտնաբերելու և վարույթ իրականացնող մարմին նրան ներկայացնելուն ուղղված միջոցները պետք է լինեն շարունակական՝ նպատակ ունենալով ապահովելու վարույթի պատշաճ ընթացքը, ինչպես նաև քրեաիրավական և քրեադատավարական սկզբունքների անխոչընդոտ իրացումը:

Հարկ է նկատել նաև, որ մեղադրյալին որոնելու և նրա ներկայությունը վարույթին ապահովելուն ուղղված միջոցների կիրառումը այն գործուն երաշխիքները կարող են լինել, որոնք կհաստատեն վերջինիս կողմից քննությունից խուսափելու փաստը: Հակառակ դեպքում, երբ չեն ձեռնարկվի միջոցներ մեղադրյալի բնակության վայրը պարզելու, նրան վարույթի մասին ծանուցելու և նրա մասնակցությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ, ապա դժվար կլինի փաստել, որ մեղադրյալը տեղյակ է իր վերաբերյալ վարույթի մասին և միանշանակորեն խուսափում է դրան մասնակցելուց:

Տարբերակված այս վարույթի կիրառումը կապելով մեղադրյալի բացասական կամարտահայտության հետ՝ Օրենսգիրքը քննարկվող հատուկ ընթացակարգի իրականացումը բացառող հանգամանք է դիտում բոլոր այն դեպքերը, երբ դա կարող է չհաստատվել կամ ողջամտորեն կասկածի տակ դրվել[2]: Վերջիններիս, ինչպես նաև վերոնշյալ մյուս հանգամանքների պարզումը կամ հաստատումն էական նշանակություն ունեն, քանի որ իրավասու սուբյեկտների (հսկող և վերադաս դատախազի, ինչպես նաև դատարանի) համար հեռակա վարույթի շարունակության կամ արգելափակման վերաբերյալ հիմնավոր որոշում կայացնելու չափանիշ են լինելու[3]:

Այսպիսով, հեռակա վարույթի մեկնարկը կարող է տրվել միայն վերոշարադրյալ վարույթային նախադրյալների ամբողջության դեպքում: Հակառակ պարագայում նախաքննությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով՝ քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու այլընտրանքով[4]:

---

[1] Եթե առկա է մեղադրյալի կողմից մասնակցության իրավունքից հրաժարում, որը հաստատվում է աներկբայորեն, ապա մեղադրյալին հայտնաբերելուն ուղղված անհրաժեշտ նվազագույնի ձեռնարկումն ինքնին բավարար պետք է գնահատվի հեռակա վարույթի մեկնարկը տալու համար: Օրինակ՝ մեղադրյալը, տեղեկանալով իրեն մեղսագրվող արարքի առթիվ իրականացվող քրեական վարույթի մասին, լքում է ՀՀ տարածքը, և հեռակա միջնորդում, որ վարույթի ընթացքում իր շահերի պաշտպանությունը ստանձնեն կոնկրետ պաշտպաններ՝ իրազեկելով վարույթին անձամբ մասնակցություն ունենալու ցանկության բացակայության մասին: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ վարույթ իրականացնող մարմինները չպետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ վարույթից խուսափող մեղադրյալի ներկայությունն ապահովելու և քրեիրավական ներգործության հնարավոր միջոցների կիրառումը վերջինիս նկատմամբ ապահովելու համար, բայց այդ հանգամանքը պետք է գնահատվի ոչ թե որպես հեռակա վարույթ նախաձեռնելու ինքնուրույն պայման, այլ առհասարակ վարույթի բնականոն ընթացքը ապահովելուն ուղղված անհրաժեշտ միջոց:

[2] Տե՛ս Օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասը:

[3] Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջ 617:

[4] Տե՛ս նույն տեղում:

ОСНОВАНИЕ И УСЛОВИЯ ПРОИЗВОДСТВА В ОТСУТСТВИЕ ОБВИНЯЕМОГО В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Петик Мкртчян
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета ЕГУ

Статья посвящена основанию и условиям производства в отсутствие обвиняемого в уголовном судопроизводстве Республики Армения (заочное производство). В результате соответствующего анализа автор раскрывает содержание оснований и условий заочного производства в уголовном судопроизводстве Республики Армения и подчеркивает границы их толкования в соответствии с европейскими стандартами.

В статье представлены также позиции Европейского суда по правам человека по данному вопросу, и в их свете обсуждаются теоретические проблемы толкования оснований и условий заочного производства.

Важное место в статье занимает исследование теоретических проблем производства в отсутствие обвиняемого, в рамках которого автор ссылается на интерпретацию оснований и содержания условий заочного производства. Автор раскрывает, что следует понимать под уклонением от участия в уголовном производстве, а также в каких ситуациях можно сказать, что обвиняемый надлежащим образом уведомлен о возбужденном в его отношении уголовном преследовании. Автор также считает, что не только практические, но и теоретические вопросы заочного производства следует рассматривать в свете права на справедливое судебное разбирательство, чтобы правильно понимать их сущность и выносить верные суждения.

THE BASIS AND CONDITIONS OF PROCEEDINGS IN THE ABSENCE OF THE ACCUSED IN CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA

Petik Mkrtchyan
PhD Student at the YSU Chair of Criminal Proceedings and Criminalistics

The article is dedicated to the basis and conditions of proceedings in the absence of the accused (proceedings in absentia) in the RA criminal proceedings. As a result of the relevant analysis, the author reveals the content of the basis and conditions of remote proceedings in criminal proceedings of the RA and emphasizes the limits of their interpretation in accordance with European standards.

The article also presents decisions of the European Court of Human Rights on this issue, and in their light discusses the theoretical problems of interpretation of the grounds and conditions of remote proceedings.

In the article an important place is occupied by the study of theoretical problems of production in the absence of the accused, in which the author refers to the interpretation of the basis and content of the conditions of proceedings in absentia. The author reveals what should be understood as evasion from participation in criminal proceedings, and also in which situations it can be said that the accused is properly notified of the criminal prosecution initiated against him. The author also believes that not only practical, but also theoretical issues of proceedings in absentia should be considered in the light of the right to a fair trial in order to correctly understand their essence and make correct assertions.

Բանալի բառեր – *մեղադրյալի բացակայությամբ վարույթ, վարույթից խուսափել, պատշաճ ծանուցում, քրեական հետապնդում*
Ключевые слова: *производство в отсутствие обвиняемого, надлежащее уведомление, уголовное преследование, заочное производство, фактическое уголовное преследование, непосредственное участие*
Key words: *proceedings in the absence of the accused, avoid proceedings, proper notice, criminal prosecution. proceedings in absentia, actual criminal prosecution, direct participation*